ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 203

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի,84-րդ հոդվածի 2-րդ մասի , «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Վերին Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի N 21-Ն որոշումը որոշում եմ՝

1. 2019 թվականի դեկտեմբերի 09-ին Վերին Պտղնի համայնքապետարանի շենքում հրավիրել հանրային բաց լսումներ՝ Վերին Պտղնի համայնքի 2020 թվականի բյուջեի և համայնքի տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ:
2. Հաստատել Վերին Պտղնի համայնքի 2020 թվականի բյուջեի և համայնքի տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն N1 և 2 հավելվածների:
3. Հանրային քննարկման ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Նարինե Շառոյանին:
4. Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Զուրաբյանին
1) համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել Վերին Պտղնի համայնքի 2020 թվականի բյուջեի և համայնքի տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
2) համայնքապետարանի պաշտոնական կայքում հրապարակել համայնքի 2020 թվականի բյուջեի նախագիծը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 22
գ.Վերին Պտղնի